

## Երանի երիտասարդության, նա իւրացրել է Հայաստանը այնպէս, որ իրենց ծնողները չէին կարող

Երբ առաջին անգամ Հայաստան եմ այցելել իբրև պատանի 70 ականներին, ուրիշ ժամանակներ էին և քիչ էին հնարավորությունները անկախ ուսումնասիրության և որոնումների: Քիչ էին ոչ թե որովհետև մեր խմբի տարիքն էր փոքր, այլ որովհետև Հայաստանը գտնվում էր ավելի մեծ պետության կառավարման տակ և առաջնորդվում՝ նրա օրենքներով: Դա հասկանալի էր: Բայց հակառակ այս հանգամանքին, այդ առաջին փորձառությունը խարխախային փորձառություն էր ինձ համար, որովհետև ինձ կապեց մի իրական տեղի հետ: Ավելի շնչող քան որեէ լուսանկար և ավելի կենդանի քան որևէ գրքի էջ:

Քառասուն տարի ետք այսօրվա պատանին կամ 25 տարեկան երիտասարդը, ունի նույն հնարավորության 2.0 տարբերակը՝ այցելել անկախ Հայաստանի հանրապետություն, ուր միակ սահմանափակումը իր երևակայության չափն է: Այս զեկույցների խմբի խորագիրն է «Հայպահպանման հիմնախնդիրները», բայց այսօրվա երիտասարդները ունեն եզակի հնարավորություն, սահմանելու իրենց հայու պատկանելիությունը այն ձևերով, որ մեր սերունդը, կամ իրենց ծնողների և մեծ ծնողների սերունդը չունեն: Ես մտահոգ չեմ այսօրվա երիտասարդների մասին, ինչքանով որ մտահոգ եմ իրենց ծնողների սերնդի մասին: Երիտասարդ սերնդի հայապահպանումը այլևս չի ենթարկվում քառակուսի օրենքների և չափորոշիչների: Այս սերունդը **գրում է** նոր օրենք հայապահպանման և ինքնության զարգացման մասին, օրենք, որի հիմնական բաղադրիչը **հայկական պետականությունն է**: Դա ազատ մայրուղի է, այո, իր բազմաթիվ փոսերով և թերություններով, բայց դա գործող է, բաց է և հասանելի: Այսօրվա 25տարեկանը ուրիշ իրականություն չի հիշում:

Այսօր Դեպի Հայքի ծրագրում տեսնում եմ բազմաթիվ երիտասարդներ, որոնց ծնողները այցելում են Հայաստան առաջին անգամ, հետևելով իրենց զավակների քայլերին: Երիտասարդների մասին մի՛ մտահոգվեք: Նախկին սերունդները **երագում էին** անկախ պետականության մասին, իսկ այսօրվա սերունդը ապրում է այդ իրականությունը: Այսօր google-ում EVN տառերն են դնում և բազմաթիվ քաղաքներից դեպի Երևան օդանավի տոմսերի արժեքներ են փնտրում:

Հազար տարում, առաջին անգամ է, որ սերունդ է ծնվում Հայաստանում թե սփյուռքում, հայկական պետության գոյության ներքո, դառնում է չափահաս, այդ նույն պետության գոյության ներքո և որի զավակներն էլ են ծնվելու և մեծանալու միևնույն պետության գոյության ներքո: Անցյալի հայապահպանման մոդելները արդեն ժամանակավրեպ են և լավ չեն գործում անկախ պետականության առկայության

պարագայում: Հայապահպանման բառամթերքը, պետք է հիմնականորեն վերարժևորել: Մեր գործը մեկն է. ստավելագույն քանակով երիտասարդություն ուղորդել դեպի Հայաստան, մնալու որքան երկար որ հնարավոր է: Ավելի լավ տարբերակ՝ կողմ քաշվել, չխանգարել և թողնել, որ նրանք գտնեն իրենց ճանապարհը: Հայապահպանման միակ երաշխիքը, Հայաստան սփյուռք մայրուղու վրա ազատ և մշտական ճանապարհորդելն է: Մեծեր՝ ուշացել եք, բայց շատ չնախանձեք: